



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան

04.05.2020թ.

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

### ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/44

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի  
դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների  
նախարարության ներկայացուցիչներ

Դ. Արղամանյանի (լիազորագիր, տրված՝ 04.05.2020թ.),

Ի. Օսիպյանի (լիազորագիր, տրված՝ 04.05.2020թ.),

քննելով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության  
(հետայսու նաև՝ Պատվիրատու) կարիքների համար Մ-3, Թուրքիայի սահման – Մարգարա  
– Վանաձոր – Տաշիր – Վրաստանի սահման միջպետական նշանակության  
ավտոճանապարհի կմ 127+900-կմ130+400 հատվածի հիմնանորոգման աշխատանքների  
ձեռքբերման նպատակով հայտարարված ՏԿԵՆ-ԲՄԱՇՁԲ-2020/2Շ ծածկագրով բաց  
մրցույթի շրջանակներում «Վ.Ն.Ս. Շին» ՍՊԸ-ի կողմից 23.04.2020թ. ներկայացված  
(27.04.2020թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2020/44 բողոք),  
պարզեցի հետևյալը.

**1. «Վ.Ն.Ս. Շին» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

«Վ.Ն.Ս. Շին» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 23.04.2020թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կարիքների համար Մ-3, Թուրքիայի սահման – Մարգարա – Վանաձոր – Տաշիր – Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ 127+900-կմ130+400 հատվածի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է ՏԿԵՆ-ԲՄԱՇՁԲ-2020/2 ծածկագրով բաց մրցույթ (հետայսու նաև՝ Ընթացակարգ):

Վերը նշված ընթացակարգին, ի թիվս այլ ընկերությունների, մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Վ.Ն.Ս. Շին» ՍՊԸ-ն՝ ներկայացնելով 339.999.999 ՀՀ դրամ գնային առաջարկ (ընդհանուր գին):

Մասնավորապես, «Վ.Ն.Ս. Շին» ՍՊԸ-ն ներկայացրել է հետևյալ գնային առաջարկը (կցվում է բողոքին).

Ուսումնասիրելով ՏԿԵՆ-ԲՄԱՇՁԲ-2020/2Շ ծածկագրով բաց մրցույթի հրավերը, այդ թվում կնքվելիք պայմանագրի նախագիծը «Վ.Ն.Ս. Շին» ՍՊԸ-ն առաջարկում է պայմանագիրը կատարել ներքոհիշյալ ընդհանուր գներով.

Զ/հ	Աշխատանքի անվանումը	Ինքնարժեք /տառերով և թվերով/	Շահույթ /տառերով և թվերով/	ԱԱՀ** /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	2	3	4	5	6=3+4+5
1	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կարիքների համար Մ-3, ԹՈՒՐՔԻԱՅԻ ՍԱՀՄԱՆ – ՄԱՐԳԱՐԱ – ՎԱՆԱՁՈՐ – ՏԱՇԻՐ – ՎՐԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀԻ ԿՄ127+900-ԿՄ130+400 հատվածի հիմնանորոգման աշխատանքներ	257 575 757	25 757 576	56 666 666	339 999 999

Այնուհետև, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 15.04.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության (կցվում է բողոքին) 4 կետի համաձայն արձանագրել է, որ

«Վահագն և Սամվել» ՍՊԸ-ի, «Վառմաշ» ՍՊԸ-ի և «Վ.Ն.Ս. Շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկ Հավելված 2-ում ընդհանուր գինը սխալ է հաշվարկված:

Միևնույն ժամանակ նշված արձանագրությունում բացակայում է «Վ.Ն.Ս. Շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժելու մասին գնահատող հանձնաժողովի որոշումը:

Բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ «Վ.Ն.Ս. Շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը եղել է ամենացածրը, իսկ տվյալ մրցույթով հաղթող մասնակիցը առաջարկել է 32 մլն. ՀՀ դրամ ավելի բարձր գնային առաջարկ:

*Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումները.*

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու՝ նաև Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ին ընդունված N 526-Ն որոշման (հետայսու նաև Կարգ) 32-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանվում է՝

2) մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

- Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում:

- Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը:

- Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման: Ընդ որում, մասնակցի հայտը ենթակա չէ մերժման, եթե՝

- ա. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակները լրացված են միայն թվերով, իսկ ընդհանուր գնի սյունակը՝ և տառերով և թվերով կամ միայն տառերով,

- բ. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների միջև առկա է անհամապատասխանություն, սակայն տառերով կամ թվերով նշված գումարներից որևէ մեկի հանրագումարը համապատասխանում է ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարին.

- գ. մասնակցի գնային առաջարկում չափաբաժնի համարը սխալ է նշված, սակայն գնման առարկայի անվանումը ճիշտ է լրացված:

Ինչպես արդեն հայտնել ենք՝ «Վ.Ն.Ս. Շին» ՍՊԸ-ն մասնակցության հայտ է ներկայացրել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կարիքների համար հայտարարված ՏԿԵՆ-ԲՄԱՇՁԲ-2020/2Շ ծածկագրով բաց մրցույթին՝ ներկայացնելով 339.999.999 ՀՀ դրամ գնային առաջարկ (ընդհանուր գին): Սակայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.04.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 4 կետի համաձայն արձանագրվել է, որ «Վ.Ն.Ս. Շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկ Հավելված 2-ում ընդհանուր գինը սխալ է հաշվարկված:

Մասնավորապես, «Վ.Ն.Ս. Շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է հետևյալ գնային առաջարկը.

Ձ/հ	Աշխատանքի անվանումը	Ինքնարժեք /տառերով և թվերով/	Շահույթ /տառերով և թվերով/	ԱԱՀ** /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	2	3	4	5	6=3+4+5
1	<p>ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կարիքների համար Մ-3, ԹՈՒՐՔԻԱՅԻ ՍԱՀՄԱՆ – ՄԱՐԳԱՐԱ – ՎԱՆԱԶՈՐ – ՏԱՇԻՐ – ՎՐԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀԻ ԿՄ127+900-ԿՄ130+400 հատվածի հիմնանորոգման աշխատանքներ</p>	257 575 757	25 757 576	56 666 666	339 999 999

Ուսումնասիրելով ներկայացված գնային առաջարկը՝ ակնհայտ է դառնում, որ ներկայացված գնային առաջարկում ընդհանուր գինը ճիշտ է հաշվարկված: Մասնավորապես, 3, 4, 5 սյունակներում նշված գումարների, այսինքն ներկայացված ինքնարժեքի, կանխատեսվող շահույթի և ավելացված արժեքի հարկի հանրագումարը հստակ համապատասխանում է ընդհանուր գին սյունակում նշված գումարին: Այսինքն ակնհայտ է, որ այստեղ առկա չի կարող լինել գնահատող հանձնաժողովի կողմից մատնանշած իրավիճակը, հիմքը, այն է, որ գնային առաջարկում ընդհանուր գինը սխալ է հաշվարկված:

Ըստ երևույթի, խնդիրը կայանում է մասնակցի կողմից հաշվարկված ԱԱՀ գումարի մեջ, քանի որ եթե հաշվարկվում է ԱԱՀ, ապա սովորական հաշվարկման դեպքում ստացվում է 56 666 666 դրամ գումար, իսկ եթե հաշվիչ մեքենայի վրա դրվում է գործիք՝ ցույց տալ տասնորդական թվերը, ապա ԱԱՀ գումարը ստացվում է 56 666 666, 6 ՀՀ դրամ գումար: Մինչդեռ բողոքաբերի կողմից ԱԱՀ գումարի սյունակում նշված է 56 666 666 դրամ գումարը՝ առանց 6 տասնորդականի, այսինքն առանց 60 լումայի:

Տեսականորեն կարելի է պատկերացնել, որ գնահատող հանձնաժողովը նկատի ունենալով այս 60 լումայի խնդիրը՝ արձանագրել է, որ սխալ է հաշվարկվել գնային առաջարկի ընդհանուր գինը:

Մինչդեռ նշված վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ ընդունված որոշման հիմքը բացակայում է, քանի որ մասնակցի կողմից ընդհանուր գինը ճիշտ է հաշվարկված՝ գնային առաջարկում ներկայացված բանաձևին համապատասխան:

Ինչ վերաբերում է բարձրացված ԱԱՀ-ին վերաբերող խնդրին, ապա նախ, գնահատող հանձնաժողովը դրան ընդհանրապես չի անդրադարձել:

Բացի այդ, արդյոք հիմնավոր է 60 լումա տարբերություն տվող հաշվարկի դեպքում մերժել, այն էլ սխալ հիմքով, մասնակցի գնային առաջակը, եթե արդյունքում տվյալ մրցույթով հաղթող է ճանաչվում 32 մլն. ՀՀ դրամ ավելի բարձր գնային առաջարկ ներկայացրած մասնակիցը, և դրանով խախտվում են «Գնումների մասին» ՀՀ օրենքով ամրագրված սկզբունքները:

Մասնավորապես, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Մինչդեռ գնումների մասին ՀՀ օրենսդրության վկայակոչված նորմերի վերլուծության արդյունքում՝ գտնում ենք, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, ցանկանում ենք հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք

ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Ուսումնասիրելով գնահատող հանձնաժողովի կողմից «Վ.Ն.Ս. Շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը՝ ընդհանուր գինը սխալ հաշվարկելու հիմքով անբավարար գնահատելու որոշումը, որի արդյունքում գնահատող հանձնաժողովը նույնիսկ չի մերժել ՍՊԸ-ի հայտը՝ գալիս ենք այն եզրահանգման, որ գնահատող հանձնաժողովի կողմից «Վ.Ն.Ս. Շին» ՍՊԸ-ի հայտը անբավարար գնահատելու և ապա մերժելու մասին որոշումը չի բխում գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներից և միտված չէ ապահովելու գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացմանն ու պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնմանը:

Ելնելով վերոշարադրյալ նորմի վերլուծությունից՝ կարելի է եզրահանգել, որ Հանձնաժողովը «Վ.Ն.Ս. Շին» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշում կայացնելիս, թույլ է տվել ՀՀ ֆինանսների նախարարի 24.05.2017թ. թիվ 244-Ա հրամանով հաստատված Մրցույթի հրավերի օրինակելի ձևի որևէ ողջամիտ իրավական փաստարկով չհիմնավորվող մեկնաբանություն՝ հաշվի չի առել այն ընդունող մարմնի նպատակը, նրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝ Օրենքի նպատակին, սկզբունքներին և գործողության ոլորտին նվիրված 3-րդ հոդվածի կարգավորման ընդհանուր համատեքստը, ինչի արդյունքում կայացված որոշմամբ խախտվել են գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման սկզբունքներն ու գնումների մասին ՀՀ օրենսդրության նպատակը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ գտնում ենք, որ գնահատող հանձնաժողովի կողմից «Վ.Ն.Ս. Շին» ՍՊԸ-ի ներկայացրած գնային առաջարկը սխալ հիմքով անբավարար գնահատելու և ենթադրաբար նաև մերժելու մասին որոշումը չի բխում գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներից և միտված չէ ապահովելու գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացմանն ու պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնմանը:

Արդյունքում պետությունը ստիպված է լինելու նշված մրցույթի արդյունքում պայմանագիր կնքել ավելի, քան 32 մլն. ՀՀ դրամ բարձր գնային առաջարկ ներկայացրած մասնակցի հետ, ինչը, մեր կարծիքով, էական վնաս կպատճառի պետական բյուջեին՝ ներկայիս ծանր տնտեսական պայմաններում:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է՝

1. Դադարեցնել «ՏԿԵՆ-ԲՄԱՇՁԲ-2020/2Շ» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի կողմից «Վ.Ն.Ս. Շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը՝ Ընդհանուր գինը սխալ հաշվարկված լինելու հիմքով անբավարար գնահատելու մասին որոշումը:

2. Պարտավորեցնել «ՏԿԵՆ-ԲՄԱՇՁԲ-2020/2Շ» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում՝ «Վ.Ն.Ս. Շին» ՍՊԸ-ի հայտը հրավերի պահանջներին բավարար գնահատելու վերաբերյալ:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 04.05.2020թ. ժամը 10:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

## **2. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.**

Ի պատասխան Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 27.04.2020թ. թիվ /ԲՔԱ-ԳՆ/1/6199-2020 գրության՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը 29.04.2020թ. գրությամբ հայտնել է, որ ներկայացնում է «Վ.Ն.Ս. Շին»



ՍՊԸ-ի 23.04.2020թ. ներկայացրած բողոքի վերաբերյալ որոշում կայացնելու համար անհրաժեշտ փաստաթղթերը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 04.05.2020թ. ժամը 10:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր հայտնել են, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հանդես է գալիս որպես պետական մարմին, ուստի առաջնորդվելով ՀՀ Սահմանադրությամբ՝ իրավասու է կատարել միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ և օրենքներով: Տվյալ դեպքում՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգը, որը հանդիսանում է նորմատիվ իրավական ակտ, մեկնաբանվել է Պատվիրատուի կողմից նրա մեջ առկա բառերի բառացի նշանակությամբ: Հետևաբար Պատվիրատուն առաջնորդվել է Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի դ) պարբերությամբ, որը սահմանում է բացառություն՝ որ դեպքում գնային առաջարկը չի մերժվում, մասնավորապես՝ մասնակցի հայտը ենթակա չէ մերժման եթե գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ, ավելացված արժեքի հարկ և ընդհանուր գումար սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների լումաները կլորացված են մինչև հինգ տասնորդականը՝ դեպի ներքև ամբողջ թիվը, իսկ հինգ տասնորդական և դրանից ավելին՝ դեպի վերև ամբողջ թիվը: Հետևաբար, հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Վ.Ն.Ս. Շին» ՍՊԸ-ի կողմից գնային առաջարկը սխալ է լրացված եղել և կլորացումները ևս սխալ են եղել, այսինքն՝ չի պահպանվել գնային առաջարկին ներկայացվող պահանջները, ուստի Պատվիրատուի կողմից այն մերժվել է:

Ամփոփելով վերոգրյալը՝ Պատվիրատուի ներկայացուցիչը խնդրել է Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, առաջնորդվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգով, մերժել բողոքը:

### **3. ԳԲԲԱ-ՆԳ-2020/44 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը**

ԳԲԲԱ-ՆԳ-2020/44 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կարիքների համար Մ-3, Թուրքիայի սահման - Մարգարա - Վանաձոր - Տաշիր-Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ 127+900-կմ130+400 հատվածի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է ՏԿԵՆ-ԲՄԱՇՁԲ-2020/2Շ ծածկագրով բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել «Վ.Ն.Ս. Շին» ՍՊԸ-ն:

2. «Վ.Ն.Ս. Շին» ՍՊԸ-ն հայտի թիվ 2 հավելվածով 1-ին չափաբաժնի համար ներկայացրել է ինքնարժեք (257 575 757 ՀՀ դրամ), շահույթ (25 757 576) և ԱԱՀ (56 666 666 ՀՀ դրամ) բաղադրիչներից բաղկացած գնային առաջարկ՝ 339 999 999 ՀՀ դրամ ընդհանուր գնով:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.04.2020թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Վ.Ն.Ս. Շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկում (Հավելված 2) ընդհանուր գինը սխալ է հաշվարկված:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.04.2020թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ ՏԿԵՆ-ԲՄԱՇՁԲ-2020/2Շ ծածկագրով բաց մրցույթի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակիցը՝ «ԱԱԲ ՊՐՈԵԿՏ» ՍՊԸ-ն և որոշվել է մրցույթի ընտրված մասնակցին առաջարկել 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի և որակավորման ապահովում՝ հրավերով սահմանված կարգին համապատասխան:

#### **4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.**

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Վ.Ն.Ս. Շին» ՍՊԸ-ի 23.04.2020թ. ներկայացրած բողոքը, ԳԲԲԱ-ՆԳ-2020/44 բողոքի շրջանակներում Պատվիրատուի կողմից հայտնած դիրքորոշումը, «Վ.Ն.Ս. Շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը և գործով առկա նյութերը, հայտնում են հետևյալը.

ՀՀ հարկային օրենսգրքի (հետայսու նաև՝ Օրենսգիրք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի ա) ենթակետով սահմանվում է, որ Հայաստանի Հանրապետությունում կիրառվում են՝

պետական հարկեր, որոնց տեսակներից է՝ ավելացված արժեքի հարկը (հետայսու նաև՝ ԱԱՀ):

Օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանվում է, որ **ԱԱՀ-ով հարկման օբյեկտ են համարվում** հետևյալ գործարքներն ու գործառնությունները.

1) ապրանքի մատակարարումը, եթե ապրանքի մատակարարման վայրը, Օրենսգրքի 37-րդ հոդվածի համաձայն, համարվում է Հայաստանի Հանրապետությունը.

2) **աշխատանքի կատարումը** և (կամ) ծառայության մատուցումը (բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերի):

Օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ **Օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված՝ ԱԱՀ-ով հարկման օբյեկտ համարվող գործարքների ու գործառնությունների հարկման բազայի նկատմամբ ԱԱՀ-ն հաշվարկվում է 20 տոկոս դրույքաչափով**, բացառությամբ Օրենսգրքի 64-րդ և 65-րդ հոդվածներով սահմանված գործարքների ու գործառնությունների:

Օրենսգրքի 318-րդ հոդվածի համաձայն՝ հարկային հաշվարկներում, ինչպես նաև հարկային մարմնի կողմից կազմվող և հարկ վճարողին տրվող ծանուցագրերում, տեղեկանքներում, արձանագրություններում, ստուգման ակտերում և **այլ փաստաթղթերում հարկ վճարողի հարկային պարտավորությունների գումարների**, դեբետային գումարների և փոխհատուցման ենթակա **գումարների հաշվառման համար, որպես չափման միավոր, ընդունվում է դրամը (լումաներն անտեսվում են)**:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 30-րդ 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: **Հայտը ներառում է մասնակցի հաստատած գնային առաջարկը:**

Օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ **եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձին տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում, մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն մասում նշված հարկի գումարի հաշվարկման:**

«Կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «դ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է գնային առաջարկ:

Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման: Ընդ որում, մասնակցի հայտը ենթակա չէ մերժման, եթե՝

ա. գնային առաջարկի հնքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակները լրացված են միայն թվերով, իսկ ընդհանուր գնի սյունակը՝ և՛ տառերով, և՛ թվերով կամ միայն տառերով,

բ. գնային առաջարկի հնքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների միջև առկա է անհամապատասխանություն, սակայն տառերով կամ թվերով նշված գումարներից որևէ մեկի հանրագումարը համապատասխանում է ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարին,

գ. գնային առաջարկում չափաբաժնի համարը սխալ է նշված, սակայն գնման առարկայի անվանումը ճիշտ է լրացված,

դ. գնային առաջարկի հնքնարժեք, շահույթ, ավելացված արժեքի հարկ և ընդհանուր գումար սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների լումաները կլորացված են մինչև հինգ տասնորդականը՝ դեպի ներքև ամբողջ թիվը, իսկ հինգ տասնորդական և դրանից ավելին՝ դեպի վերև ամբողջ թիվը,

ե. գնային առաջարկի հնքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակներում գումարները լրացված են ինչպես թվերով, այնպես էլ տառերով, և դրանք համապատասխանում են միմյանց, իսկ ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարի մեջ լրացված են ավելորդ բառեր, որի արդյունքում ստացվում է գոյություն չունեցող թիվ: Ընդ որում սույն պարբերության մեջ նշված դեպքում գնահատող հանձնաժողովը հայտը գնահատելիս հիմք է ընդունում ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով լրացված գումարների հանրագումարը,

զ. գնային առաջարկի սյունակներում տառերով լրացված գումարների մեջ լումաները նշված են թվերով.

**Կարգի 32-րդ կետի 8-րդ ենթակետի համաձայն՝ *եթե պայմանագրի գինը կայուն է, ապա մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով:***

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Այսպիսով՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կարիքների համար Մ-3, Թուրքիայի սահման - Մարգարա - Վանաձոր - Տաշիր-Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ 127+900-կմ130+400 հատվածի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է ՏԿԵՆ-ԲՄԱՇՁԲ-2020/2Շ ծածկագրով բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել «Վ.Ն.Ս. Շին» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի հրավերով Հավելված 2-ը ներկայացված է հետևյալ տեսքով.

*Հավելված 2*  
**ՏԿԵՆ-ԲՄԱՇՁԲ-2020/2Շ ծածկագրով**  
**բաց մրցույթի հրավերի**

**Գ Ն Ա Յ Ի Ն Ա Ռ Ա Ջ Ա Ր Կ**

Ուսումնասիրելով ՏԿԵՆ-ԲՄԱՇՁԲ-2020/2Շ ծածկագրով բաց մրցույթի հրավերը, այդ թվում կնքվելիք պայմանագրի նախագիծը, \_\_\_\_\_-ն առաջարկում է

մասնակցի անվանումը

պայմանագիրը կատարել ներքոհիշյալ ընդհանուր գներով.

ՀՀ դրամ

Չափա-բաժինների համարները	Աշխատանքի անվանումը	Ինքնարժեք /տատերով և թվերով/	Շահույթ /տատերով և թվերով/	ԱԱՀ** /տատերով և թվերով/	Ընդհանուր գինը /տատերով և թվերով/
1	2	3	4	5	6=3+4+5
1	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N1>>				
2	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N2>>				
...	...				

«Վ.Ն.Ս. Շին» ՍՊԸ-ի կողմից հայտի թիվ 2 հավելվածով ներկայացրած գնային առաջարկում **ինքնարժեքը նշվել է 257 575 757 ՀՀ դրամ, շահույթ՝ 25 757 576 ՀՀ դրամ և ԱԱՀ-ն՝ 56 666 666 ՀՀ դրամ, ընդհանուր գինը՝ 339 999 999 ՀՀ դրամ:**

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.04.2020թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Վ.Ն.Ս. Շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկում (Հավելված 2) ընդհանուր գինը սխալ է հաշվարկված:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.04.2020թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ ՏԿԵՆ-ԲՄԱՇՁԲ-2020/2Շ ծածկագրով բաց մրցույթի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակիցը՝ «ԱԱԲ ՊՐՈԵԿՏ» ՍՊԸ-ն, և որոշվել է մրցույթի ընտրված մասնակցին առաջարկել 10

աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի և որակավորման ապահովում՝ հրավերով սահմանված կարգին համապատասխան:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ ԳԲԲԱ-ՆԳ-2020/44 բողոքով հրավիրված նիստի ընթացքում Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնել է, որ գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի դ) պարբերության պահանջը, անբավարար է գնահատել «Վ.Ն.Ս. Շին» ՍՊԸ-ի հայտը այն հիմնավորմամբ, որ վերջինիս գնային առաջարկում կլորացումները սխալ են լրացված եղել, այսինքն չեն պահպանվել գնային առաջարկին ներկայացվող պահանջները:

Վերոգրյալով պայմանավորված՝ արձանագրում եմ, որ Ընկերության կողմից գնային առաջարկում տվյալ գործարքի գծով ՀՀ պետական բյուջե վճարվելիք ԱԱՀ-ի գումարը նշվել է 56 666 666 դրամ, մինչդեռ ԱԱՀ գումարը (20 տոկոս) ստացվում է 56 666 666, 6 ՀՀ դրամ, որն էլ հիմք է հանդիսացել գնահատող հանձնաժողովի համար արձանագրելու, որ «Վ.Ն.Ս. Շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկում (Հավելված 2) ընդհանուր գինը սխալ է հաշվարկված:

Այս տեսանկյունից հարկ եմ համարում արձանագրել հետևյալը.

Հավելված 2-ում՝ գնային առաջարկում, «Ընդհանուր գինը»՝ 6-րդ սյունակում նշված գումարը հաշվարկվում է  $6=3+4+5$  (ընդհանուր գինը=ինքնարժեք+շահույթ+ԱԱՀ) բանաձևով:

ՀՀ հարկային օրենսգրքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի ա) ենթակետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում կիրառվում են պետական հարկեր, որոնց տեսակներից է ավելացված արժեքի հարկը:

Օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ **եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձին տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում, մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն մասում նշված հարկի գումարի հաշվարկման:**

Օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանվում է, որ **ԱԱՀ-ով հարկման օբյեկտ են համարվում** հետևյալ գործարքներն ու գործառնությունները.

1) ապրանքի մատակարարումը, եթե ապրանքի մատակարարման վայրը, Օրենսգրքի 37-րդ հոդվածի համաձայն, համարվում է Հայաստանի Հանրապետությունը.

2) **աշխատանքի կատարումը** և (կամ) ծառայության մատուցումը (բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերի):

Օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ **Օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված՝ ԱԱՀ-ով հարկման օբյեկտ համարվող գործարքների ու գործառնությունների հարկման բազայի նկատմամբ ԱԱՀ-ն հաշվարկվում է 20 տոկոս դրույքաչափով:**

Միաժամանակ Օրենսգրքի 318-րդ հոդվածով սահմանվում է, որ համաձայն՝ հարկային հաշվարկներում, ինչպես նաև հարկային մարմնի կողմից կազմվող և հարկ վճարողին տրվող ծանուցագրերում, տեղեկանքներում, արձանագրություններում, ստուգման ակտերում և **այլ փաստաթղթերում հարկ վճարողի հարկային պարտավորությունների գումարների, դեբետային գումարների և փոխհատուցման ենթակա գումարների հաշվառման համար, որպես չափման միավոր, ընդունվում է դրամը (լումաներն անտեսվում են):**

Այսպիսով՝ վկայակոչված հոդվածների համադրված վերլուծության արդյունքում հանգում են հետևյալ եզրակացությանը.

«Վ.Ն.Ս. Շին» ՍՊԸ-ն, ՏԿԵՆ-ԲՄԱՇՁԲ-2020/2Շ ծածկագրով բաց մրցույթին ներկայացնելով հայտ՝ հայտում ներառվող փաստաթղթով՝ «Վ.Ն.Ս. Շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկով, առանձին տողով ներկայացրել է տվյալ գործարքի գծով պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումար՝ 56 666 666 ՀՀ դրամ, որը կառաջանար հնարավոր գործարքը կատարելու պայմաններում պայմանագրի կատարման շրջանակներում Հարկային օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում ինքնուրույն հաշվարկելիս, հետևաբար Ընկերությունը, գնային առաջարկում առանձին տողով նախատեսված ԱԱՀ-ի գծով վճարվելիք գումարի չափը նշելով 56 666 666 ՀՀ դրամ և անտեսելով տվյալ գործարքի գծով պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի մասով առաջացած լուման, ըստ էության առաջնորդվել է Օրենսգրքի 318-րդ հոդվածով, որտեղ հստակ սահմանվում է, որ հարկային հաշվարկներում և այլ փաստաթղթերում հարկ վճարողի հարկային պարտավորությունների գումարների, դեբետային գումարների և փոխհատուցման ենթակա գումարների հաշվառման համար, որպես չափման միավոր, ընդունվում է դրամը (լումաներն անտեսվում են), ինչը և տվյալ դեպքում կատարվել է:



Վերոգրյալով պայմանավորված՝ արձանագրում եմ, որ գնային առաջարկի 5-րդ սյունակում նշված ԱԱՀ-ի գումարի հաշվարկման դեպքում լումայի անտեսվելու պայմաններում Ընկերության կողմից ընդհանուր գինը ճիշտ է հաշվարկված՝ գնային առաջարկում ներկայացված բանաձևին համապատասխան, հետևաբար գտնում եմ, որ Ընկերության հայտը սույն մասով ենթակա չէ մերժման:

Ինչ վերաբերում է բողոքով ներկայացված պահանջին՝ պարտավորեցնել «ՏԿԵՆ-ԲՄԱՇՁԲ-2020/2Շ» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում՝ «Վ.Ն.Ս. Շին» ՍՊԸ-ի հայտը հրավերի պահանջներին բավարար գնահատելու վերաբերյալ, ապա սույն մասով հարկ եմ համարում նշել, որ Օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովն է որոշում գնման ընթացակարգի հաղթողին (հաղթողներին), հետևաբար բողոքի պահանջը սույն մասով ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

### Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Վ.Ն.Ս. Շին» ՍՊԸ-ի 23.04.2020թ. բողոքը բավարարել մասնակի, մասնավորապես՝

1. Պարտավորեցնել «ՏԿԵՆ-ԲՄԱՇՁԲ-2020/2Շ» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին դադարեցնել «Վ.Ն.Ս. Շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը՝ ընդհանուր գինը սխալ հաշվարկված լինելու հիմքով անբավարար գնահատելու մասին որոշումը:

2. Բողոքի պահանջը՝ պարտավորեցնել «ՏԿԵՆ-ԲՄԱՇՁԲ-2020/2Շ» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում՝ «Վ.Ն.Ս. Շին» ՍՊԸ-ի հայտը հրավերի պահանջներին բավարար գնահատելու, մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

**Գնումների հետ կապված**

**բողոքներ քննող անձ՝**



**ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**